

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԻ ՊԱՐԱԿԵՐԷՆ ԲԱՌԵՐ

ՈՐ ԳՈՐԾ ԱԾՈՒԱԾ ԵՆ Ի ՊԱՏԾՈՒԹԵԱՆ ԵՂԻՇԷԻ

— 3 * —

Ուրախութեամբ կը տեսնեմ որ եւրոպացի բա- նասէրք Հետաքրքրութեամբ կը պրպըտեն մեր նախնի մատենագրութիւնը. անշուշտ գոհ ըլ- րալու ենք: Երանի՛, թէ նոր բան գրուցելու փափագաւ, կամ գտած ըլլալու անպարծա- թեամբ՝ կոտորելու թափելու շտապէին ատեն ատեն. (ինչպէս մօտերս՝ քննաբանք Մ. Խո- բենացոյ. յետ որոյ կըրնայ կարգն դալ Աւա- րայրի նախատակաց պատմին վրայ. կանխեմք ուրեմն մենք քննելու:

1.

Քրտիկար՝ ուղղելի Քրտիկար, Kerbikar 1.

« Զատուածս անարգէք և զկրակ ապանանէք, և զդուրս պղծէք, և զմեռեալս ի հող թաղելով զերկիր տապկանէք. և քրտիկար շառնելով ոյժ տայք Հարամանոյ »: Տպ. Վենետիկոյ, 1864, էջ 76: « Ետ սպանանել (վառակ) զհօրեղբայր իւր զՎաղինակ և ինքն տարաւ զտէրութիւնն իրեւ քրտիկար յարքունիս »: էջ 243:

Ա. Համօրէն տպագիրք զնեն՝ քրտիկար. միայն Թէոդոսիոյ տպագիրք՝ Անձեացեաց կոլուածը քրտար: Ի Հայկազնեան Բառարանի՝ « քրտի-

կար » բառ անյայտ, որպէս պաշտօնն և պատիւ- երկասիրութեամբ և ընտրողութեամբ և պաշ- տօնեայ երկասէր, հաւատարիմ, երախտաւոր: Մեկնութիւն մը որ ըստ տեղոյն կցկցեալ է:

Արդի պարսկերէն *Kirdigar* է՝ « Արարչա- գործ, ամենակարող Աստուած »: և մակրայ՝ « կամովին գիտութեամբ »: Իսկ *Kirdar* է՝ « գործ, աշխատութիւն, արուեստ, վիճակ, » գրադմունք, գործ բարի կամ չար »:

Այժմեան պարսկերէնով կարելի չէ ուրեմն մեկնել: Յազկերտ ի նախարարաց ոչ դրամ կ'ուզէ և ոչ քալութիւն. « Զատուածս անարգէք, ասէ, զկրակ ապանանէք, զլուրս պղծէք և զեր- կիր ապականէք »: զորս ոճիրներ են յորոց պար- տէին խորիլ Հայք: Ի՞նչ է այն Հինգերորդը կամ ըստ Պարսից գովելի բանը՝ որոյ չկատա- բուելովն՝ ոյժ կ'առնոյր Հարաման և Անշուշտ պարսկական զննին պատուիրած մէկ գործն էր:

Արգ, պահաւիկ և Պազանդ (*Pazand*) մատենից մէջ յաճախ կը տեսնենք քրտա (*Kerda*), որ կը գրուի և կը հնչի ևս քրպի *Kerbi*, (*Տեա Մայնա- խրաստ, M. West, յէջ 121*) - յոգնակի *Kerbi- kan*, այս է « գործք բարիք, արդիւնականք, արժանի վարձուց պատուիրեալք ի մազդեզն զնէն »: (*Ետրես րես*) - Սղա երեսուն և երեք տեսակ են, մի առ մի նշանակեալ Մայնա-խրաս- տի 15 զլիսուն մէջ. զխաւորներն առանձինն ևս եղեալ են ի զլուրս Դ. որոյ թարգմանու- թիւնը կը դնեմք ստորեւ:

« Մեծ քան զամենայն բարի գործս (ըրպա) առատաւնեւորութիւն, երկրորդ՝ ճշմարտախօսու- թիւն և արեանաւու մերձաւորութիւնք. երրորդ՝ եղանակային տօնք. չորրորդ՝ զհամայն զեն պաշտել (հաւատ տէն ետրտան). Հինգերորդ՝ պաշ- տել զԱստուած և ասպնականն զվաճառականս- վեցերորդ՝ ամենուն բարիք ուղել. եօթներորդ՝ աղէկ աշօք նայի բարեաց: Վնասակար ճնխները

1. Մեզմէ՛ զանէ կնիզ վեց դար առաջ աղգային բա- նասէրք ալ՝ իրեւ տարակուսական կամ ծառի՞ կե- տաքներն են այս Եղիշեայ բառերը. մէկն գտեր է Հմուտ Պարթեւ մի, ինչպէս կ'անուանէ զնա, և Թուր Զանգիւիկ մի, և իրմե սառւղծ է իրեւ 30 կամ 40 բառ: Աս՝ Քըր- աիկարի՛ ըստովին տաւր մեկնութիւն մի տուեր է, որ՝ եթէ կերպով մի կարեւոյ յարմարել Եղիշեայ առաջին վկայութեանը, երկրորդին ամենեւեկ անպարծաթ է: Այս է ըստին. « Քըրտիկար շառնելով, և այլն: Լուսաբանի »: Բոր շառնելով՝ մուտ տայք զիւրաց և հոսոյ դար- ոյ լուսեան »: - Ծառի՞, Հրատարակչին:

սպաննեւնն ալ յոյժ արդիւնական գործ մի է :
 Է և *Kerbigâr* ածական . *Kerbigâr marâ* .
 « մարդ որ առնէ գործն արդիւնականս » :

Բայց ամէնէն յաճախ գործածուած է *Kerba*
ou kar , « բարի գործք և պատշաճ » , կամ
Kar ou Kerba , « պատշաճ և բարի գործք » .
 ասի ևս առանց շարկապի քրպակար *Kerbakâr*
 կամ քրպիկար* *Kerbikâr* . փա քրպակար բռնա-
 շա պոշտան . « Ի բարի գործս և ի պատշաճ
 փութաշան լինել » : Այգ է ահա Եղիշեայ գործ-
 ածածը :

Արդ , « քրպիկար շառնելով այժ տայք Հա-
 րամանդ » , ըսել է թէ « գրարի գործս և ըզ-
 պատշաճ (ըստ մազդեզն դննի) չկատարելով
 կը զօրացնէք զԱրձնն . քանզի աւար գորու-
 թիւնը՝ ամենայն շարեօք կ'աճէր , ու բարի գոր-
 ծովք և ազօթիւք կը նուազէր , որպէս բացա-
 յայտ գրեալ է ի Սյոշ-Էշաշտ և յայլ բազում
 տեղիս յԱւեստա » :

Բ . Իսկ « Ինքն տարաւ գտէրութիւն Սի-
 նեայ իբրեւ քրպիկար յարքունիս » , կը նշա-
 նակէ թէ Սինեայ իշխանը Վաղինակ դաւա-
 ճուն և յանցաւոր գտուելով պետութեան դէմ ,
 գտէրութիւն նորա Վասակ տարաւ կամ գրա-
 լել տուաւ յարքունիս , իբրեւ « գործ բարի , ար-
 դիւնական և արժանի վարձուց » :

Թէպէտ տպագիրք քրտիկար դնեն , ու Մխի-
 թարեան Հարց (ԾԾՀԷ 1828ին տպագիր) օրինա-
 կին ետեւը դրուած զանազան ընթերցուածքն
 ալ կարծել տան մեզ , թէ Համայն ներկայ զըր-
 շագիրք զՊոյն ունին . այսու Հանդերձ տարա-
 կոյս չկայ որ ձեռագրի սխալ մի է Հասարակ
 ամենայն օրինակաց , որպէս « Երան և Տանե-
 րան » որ պարտ է ուղղել « Երան և Աներան » :

Քրպիկար* ինչպէս մազդեզն կրօնից յա-
 տուկ ուրիշ բաներ , մահճէտականութենէ ետքը
 պարսկերէնէ ի բաց թողուած և մոռցուած էր .
 (այժմ կը գործածուի արաբերէնն Սյավար) .
 Հաւանական է որ օրինակողք Հչսանկալով թէ
 քնշ է քրպիկար , ամա ամէնէն առիկ նմանող
 արդի պարսկերէն Բրդիգար *Kirâigâr* բառը
 գրին :

2.

Ի Դարիմիւրէ՝ ուղղելի Ի Դարիմիր , *Darimîr* .

« Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր ,
 վաղագոյն առաւտուցն ի Դարիմիւրէն հկայք ,
 զի վաղիւ անդ մովպետան մովպետ ուստ յազէ ,
 և նոյն հանձնալ Հաւանեցուցէ զմիտս ձեր » :
 Եղիշէ . էլ 321 :

Թէ ողորդ տպագիրք դնէ՝ Ի Դարիիր , Մխի-
 թարեանք 1828ին տպագրին մէջ՝ Ի Դարիիր և
 վերջոց մէջ՝ Ի Դարիիրիւրէ . Իսկ յԱռնեն բա-
 առաքանի՝ ցարիիրիւրէ կամ տարիիրիւրէ՝ Դուռն
 օրինաց . իբրեւ *dar-i-tora* . որպէս ասի յՈս-
 մանեանս՝ պապ-ի-Ֆէրվա՝ Շէյխիւլ Իսլամի
 դրան (1) : Այդ մեկնութիւնը կասկածելի կ'ե-
 րեւի . նախ ձեռագրաց մէջ տարիիրիւրէ ըլլալու
 չէ և ոչ իսկ ցարիիրիւրէ , այլ ցարիիր , ցարի-
 րիւր , ցարիիրիւ : Երկրորդ՝ թոռաւ կամ թորաւ
 արքարեւ նշանակէ « Որէնք » , բայց Պիրհանի
 քաթի անուն պարսկերէն բառարանին հեղի-
 նակը կ'ըսէ , թէ այդ բառը Թուրքերէն է . թէ
 ձինգիզիւնիսն Հաստատած կարգաց և օրինաց
 անունն է . թէ՛ Մողղը իրենց չէրիթիւն թորաւ
 կ'ըսեն : Արեւնի այդ օտարաւոր և վերջէն մը-
 կանտ բառը՝ չէր կրնար հինգերորդ դարուն մէջ
 Մովպետան մովպետի գրան պաշտօնական ա-
 նունն ըլլալ . երրորդ՝ այն տեղին ուր կը հրա-
 խրուին շուարած նախարարքն՝ պաշտօնապան
 կամ գաւառաւն մի չէ , այլ կրակատուն կամ
 զոհարան , ուր մոզպետաց մոզպետը պիտի յա-
 գէ , այս է՝ յայտ առնէ , զոհագործէ :

Ի արդի պարսկերէն թարգմտիչը *dar ou tur*
 « աղլամաղլ , խիստ մութ » . է ևս Թարի՝
 « խաւար , մթին » ածական , որոյ բաղդատա-
 կանը թարգմտիչ* « մթագոյն , շատ մթին » :
 Միթէ « Առաւտուց կանուս ընդ մութին ե-
 կայք » , պարտ է իմանալ . այդ ալ զոհացուցիչ
 չըլլար . քանզի քիշ մը ստորեւ անի մակբայը
 տեղույ Համար դրուած կ'երեւի :

Առասնօր ևս գրչագրի վրիպակ մի կայ . և
 կարդալու է Դարիմիւր *darimîr* , կամ Դա-
 րիմիր , որովհետեւ Զ բաղձայնը Եղիշեայ դա-
 րուն ալ թօթափուած ըլլալու էր Ժողովրդեան
 սրտասանութեան մէջ , ինչպէս որ Փարսիները
 կամ մոզդեզն Պարսիկք (Եղտայ և Պամպայի)
 ասեն մինչև ցայս օր՝ *darimîr* : Վասն զի *dar*
i-Mîhr « դուռն կամ տաճար Միհրայ կը կո-
 չուին հանդիսաւոր յաշուից յատկացեալ կրա-
 կատունք » : *Le lieu du culte pour les grands*
sacrifices est le temple du feu ou Dari-Mîhr,
Porte ou palais de Mithra. (Տես *Darmesteter,*
Zend-Avesta , հատ էջ . Կթ) :

Մովպետան մովպետ է « մոզպետաց մոզ-
 պետ » , այդպէս կը կոչուէր զինպետը որ մեծ հա-

1 . Վերջոյնեւ բառացուցակին շատ օրինակաց մէջ
 կը պահել այս բառ . քանի որ ըստի օրինակց ունին .
 « Ի Դարիմիւրէն հկայք . Ի Դարիմիւրէն հկայք » : Մեծ օրինակ
 մ'ալ սխալ գրէ Դարիմիւր : — Երան . Հրաք :

գարուպետին զրիաթէ հաւասար իշխան մի էր: Եղիշէ զենպետիդ անունը չի տար մեզ: Ըստ Թարգարիի՝ (1) Միհրնեբսեհի անդրանկ օրդին՝ Զարաւանդ՝ այր իմաստուն, մովպետան մովպետ էր Վաւայի վերջին ժամանակները: Եւ որով հետեւ Միհրնեբսեհ Վաւայ այլ մեծ հազարայետը կամ նախարարայետն. եղած էր, կարելի էր որ Զարաւանդ զենպետութեան մէջ հաստատուած կամ հօրը հետ վերստին պաշտօնի կոչուած ըլլայ ի Յազկերտէ:

Ուստի արդի պարսկերէն է « առատ, բաւերուն, խելացի » . առհասարակ կը կարծուի թէ աստ (2) յազէ՝ ըսել է մեծ և առատ զոհ կ'ընէ: Այդ մեկնութիւնը բոլորովին սխալ է: Սասանեաց ժամանակի համարէն Պաշլախի և Պաշանդ մասունից մէջ աստ, բաժ, որ Անեստայի բաժնէն է, նշանակէ « տէր », « զօրութիւն », և է պատուանուն՝ որ զենպետին և մոզպետաց կը տրուէր. երբեմն աստ սոսկապէս կը գործածուի՝ իբրեւ « զօրութիւն հոգեւոր, տէր » . և կը համապատասխանէ մեր « տէր, պատրիարք, եպիսկոպոս » բառից. սատի՝ տէրութիւն. երբեմն ալ մովպետան մովպետ տիտղոսէն անսիւնապէս ետքը կը գրուի, ինչպէս աստանսր յՄ. զիշէն. և յայնժամ նշանակէ « զենպետ տէր, քահանայապետ տէր », (Տես Պ. Ուէստի Pahlavi texta. էջ 115 և 233). Հարկ է ուրեմն որոշել աստ ի բոլորէն. և պարբերութիւնը ուղղել այսպէս:

«... « Վաղագոյն առաւօտուցն ի Իարիմիբ եկայք, զի վաղիւ անդ Մովպետան մովպետ Ռատ յազէ, և նոյն հաճեալ հաւանեցուցէ զմիտս ձեր »:

Ըստ Միհրմէլ իւթ-Թավարիի, աստ պատուանունը կը տրուէր ևս աշխարհիկ խորհրդակցանաց և բարձրաստիճան անձանց, որպէս ի մեզ՝ « Տէր »:

Պարսիկ նախարարքն ուրք ակնանտեա եղեր էին Ղևոնդեանց նահատակութեան և հրաշից,

1. Tabari. Արաբացի պատմիչ Թադի զմբու:

3. Զարաւանդ և որ բառն ոչ միայն չի գտուի որ իշխան բառացուցակին շատ օրինակաց մէջ, այլ զտուածներն ալ խորանկ և կրնատ զրեւ. մէկն « իւր պէտ » Մեծ հաշ է », միւսն « իւր յազէ, մեծ հաշ է », մէկն ալ « իւր յազէ. մեծ հաշ է »: — Մ. Հրոս:

սկսեր էին թերահաւատի մազդեզն դենի վրայ, որով և մեղանչեր էին. վասն որոյ մոզաց Անդարձապետը կը պատուիրէ նոցա՝ որ քառութիւն հայցեն և Մովպետան մովպետէն:

Սասանեանց ժամանակի գրադաշտական գրութեանց մէջ որոշ կը տեսնուի, թէ խոստովանանքը հարկաւոր պայման մի էր մեղաց քառութեան: Մայնս-Խրատի մէջ՝ Ոգին իմաստութեան այսպէս կրտէ. « Մեղաց քառութեան համար կարեւոր է որ մարդս կամովին (քաւմանիյա) յմեղանչէ, և եթէ ոք դիտութեամբ կամ տկարութեամբ մեղք մը գործէ, պէտք է որ դատուուրաց (մազդեհտաց) և բարի մարդոց (վէհէից) առկա ապարտէ » . Տես Պլ. Մի. 16-19: Ըստ Դայաստ-Լա-Դայաստի (3), մեղք երկու տեսակ են. Ե. համեմայան, Բ. թորքանիկ, Առաջինը ի վնաս բարի մարդոյ և բարի անասնոյ եղած յանցանքն են. վնասաւն կ'ըլլայ համեմայն՝ այս է դատարտագ (4). որում պէտք է նախ հատուցուին (վլաբ իշէ), որպէս զի խոստովանութիւնն առաջի մովպետի (աւտ) կամ զղլուշի՝ կարենայ զմեղան անջատել և հեռացնել ի մեղանչողէն: Իսկ Թորքանիկ այն մեղքն են որ մեղաւորին հոգւոյն միայն կը վերաբերին ու կը վնասեն. ասոնց քառութիւնը (patitikh) մի միայն հոգեւոր Տեարց (աւտան) մեղքին ինչ ըլլալը խոստովանելով, և առաջադրելով և անոնց ամէն պատուիրածը կատարելով՝ կ'ըլլայ: Յայնժամ մեղքը կը զատուի ի հոգւոյն, և այնուհետեւ մարդուս ամենայն բարի գործերն (քրպա) արդիւնաւոր կ'ըլլան, (Տես Պլ. Ը):

3. Յօգուածոյն լեզբիւնի կը ծանուցանէ՝ որ «ս քաւայական զորք մէկ Պաշլուշի և անդաշլուշի, և զպս նշանակէ անանն »:

4. Այս իմաստիւ կամ հալտալ, հալտալու նշանակուի զորքով շատ լեզ գործածած են մեր Յազկերտի և մերձաւոր պայտղատք այլ, հաճախ զարձնելով զբառն՝ իրենց արձանագրութեանց մէջ, զորս յիշէ Սահմ. Օր. պելեան պատմիչն (Պլ. Խ. Կ.) ինչպէս. « Մի ոք իշէ ի խեցէ յալ կալ ամա նահատակ կամ հաճալ »: — « Պայքարել և համեմալ կալ մի ի խեցէ: — Ահա մի հաճալ »: — Եւտո անհալի անհաճալ »: — Յ. Հրոս:

(Շարայարեղի)

